



ՀԱՅԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիելյան

Եգիպտոսէն մեզ ուղղեալ նամակներ, որոց մէկ համառօտութիւնն կը հրատարակեմք ներկայ թուով, մեր Եգիպտաբնակ Ազգայնոց մէջ տեղի ունեցած վերջին կարեւոր յուզմունքն կը պատմեն, և իւրոյ կը բերեն տարերայն ներքին անհամերաշխ վիճակ մի, որ յառաջդիմութեան մեծ խոչընդոտն է: Կ'երեւի թէ և Եգիպտոս, ինչպէս այլ ամեն ուրեք, նորաբայս և ուսեալ երիտասարդութիւնը չափազանց տիմոքրատ դարձած՝ այլ ևս այն աւանդական, արեւելեան յարգանք չվարուիր ծնող սերնդեան հետ, ինչ որ գովելի չէ: Միւս կողմանէ, ծնող սերունդը կամ մեծերն դժկամակ կ'երեւին նոր ժամանակի նոր արամադրութեանց ու է զիջում ընել և հին նահապետական կամ մանաւանդ բռնապետական կերպերուն յարած կը մընան, չյարգելով նորերն: Մեծերուն ալ այդ ընթացք գովելի չէ բնաւ: Երկու կողմէն ալ զիջում և յարգալի վարմունք հարկաւոր է:

Եգիպտոսի վերջին դէպքերուն վերայ մասնաւորապէս նայելով՝ ուրիշ ցաւալի բան մ'ալ կը տեսնենք, որ հայ ազգին մէջ շատ ընդհանուր դարձած է — այն է արդարասիրութեան պակասը: Շնորհքով տնօրէն-վարժապետ մի, առանց ամբատանութեան, դատուած, դատապարտուած լինելու, հրաման կ'ընդունի յաջորդ օրմ իսկ դպրոցն յանձնել ուրիշի, քաջուրի

պաշտօնաւորիկ — անիրա՛ւ պահանջ: Եւ երբ այն Ուս խորհրդոյ, որ զինքն ի պաշտօն կոչած էր, հրամանին համաձայն՝ կը մերժէ նա դադարիլ իսկոյն պաշտօնէն, առաջնորդարանի բարապանն զինքը քաշքշելով դուրս կը հանէ դպրոցէն — կատարեալ անիրաւութիւն: Եւ յետոյ ալ, երբ ամբողջ ժողովուրդը բողոքներ և հանրագիրներ կուտայ գաւառական ժողովոյն ընդդէմ այս անիրաւ արարից, խաղաղապէս միջնորդ կ'իյնան և վարժապետին խորհուրդ կուտան որ չքմեղանք մ'ընէ Սրբ. առաջնորդին: Այդ ալ խաղաղասիրութեան բողիկն ստի ծածկուած անիրաւութիւն է: Ո՛վ որ յանցաւոր է, կամ ո՛վ որ աւելի յանցաւոր, նա՛ պարտի ներում խնդրել. և եթէ աւելի յանցաւորն չըխնդրեր, նուազ յանցաւորն ալ պէտք է չխնդրէ, այլ պաշտօնին հրաւրուի յարգանք:

Հայու շրթունքն մինչև ե՞րբ չպիտի կրնայ անիրաւին ըսել «դո՛ւ ես անիրաւ», և անպարտին ըսել «դու անպարտ ես»:

Հնչակեան երիտասարդ մի մեզ յղած է նամակ մի իբրև պատասխան «Հայք»ի հակ-ընկերվարական քննադատութեանց: Հրատարակել չենք կրնար զայն, նախ, վասն զի մեր առարկութեանց պատասխան չէ, և երկրորդ զի պատշաճ է որ ընկերվարական կուսակցութեան բերան եղող «Հնչակի» միջոցաւ պաշտպանուի ընկերվարականութիւնն:



HAÏK

Entered as second-class mail matter at P.
O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 203 West 23 St.
New York U. S. America.
Կամ Redaction de la Revue "Haïk," Լն :

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը
բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատա-
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգինն է ամեն երկ-
րաց համար երկու տոլար կամ 10 Ֆրանք
Կանխիկ

ԲՈՎԱՆԳԻՆՈՒԹԻՒՆ

Գրիգորը Արծրունի. — Ֆռանսու առաջ-
նորդ և օրինակ համայն ազգաց. — Նամակ
Կ. Պոլսէ. — Հայեր Յեղիպոսո. Գահիրէի
Հայոց Մէջ Յուզմունք. — Խմբագրական դի-
տողութիւն. — Մահմետական կրօնն Ամերի-
կացւոց Հնծայող Ամերիկացիւն. — Ամերիկա-
յի Հայերն:

Կը խնդրեմք որ մընի օրտըրի. կամ
մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա
նըս գրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ
գիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9th Փողոց

Պրօտուէյի մօտ

Հայերի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով: Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ(1)

Ա.

Գրիգոր Արծրունի որդին էր զօրավար
Երեմիա Արծրունւոյ, և Երեմիայի Հայրն
Գէորգ, Վանէ գաղթած ի Ռուսիա, էր ի-
րօք սեռունդ մեր պատմական Արծրու-
նեաց ցեղին :

Գրիգոր ծնած է ի Մոսկուա, 1845,
Մարտ 11ին: Մարտնչող զօրավարի որդին,
Գրիգոր, եղաւ նոյնպէս մարտնչող զօր-
ավար, միայն թէ իւր զէնք էր ոչ սուրն
այլ գրիչն, և բերդերն ու ամրութիւնք
զօրն: Կործանել աշխատեցաւ, էին նախա-
պաշարմանց, մուշրութեանց և խաւարի
ամրութիւնք:

Գրիգոր Արծրունի իւր քսանեկնդամ-
եայ զինուորութեան մէջ ճարտարու-
թեամբ գործածեց եւրոպական զէնքեր,
և իւր կռուող, յարձակող, համարձակ,
աներկիւղ. ի մի բան՝ զինուորի բնաւո-
րութեան միացած լինելով զինուոց գերա-
զանցութիւնն, հանգիստեցաւ նա հայ խմբ-
ագրաց լէգէոնին մէջ քան զամենայն
քաջամարտիկն ու հզօրն:

Երբ իմացական բարձր ընդունակու-
թեամբ և կամքի ուժով օժտեալ Հայ մի
ընդունի անկատար, կարկատուն կրթու-
թիւն, կը լինի Կարապետ Փանոսեան:

Երբ իմացական բարձր ընդունակու-
թեամբ և կամքի ուժով օժտեալ Հայ մի
ընդունի կանոնաւոր և բայմակողմանի
կրթութիւն, կը լինի Գրիգոր Արծրունի:

Մին և միւսն օգտակար թերթ կրնան
հրատարակել, բայց մին կը լինի ՄԱՆ-
ՁՈՒՄԷ իսկ միւսն՝ ՄՇԱԿ—մին յետ սա-
կաւամեայ կենաց կը սկսի անկանիլ և տը
կարանալ, միւսն՝ հանգոյն բնաւի խաղո-
ղէ և վարպետի ձեռքով չի նուաճ գինւոյ՝
քանի հիտնայ այնքան կ'ուժովնայ և կ'ազ-
նուանայ:

(1) Աստ կը դատենք զԱրծրունի նո-
րա վերջին երկու կամ երեք տարուան
ՄՇԱԿ թերթն միայն ճանաչելով, որ սա-
կայն իբրեւ անմահ գործիչին զարգացման
բարձրագոյն վիճակի պատկերն՝ որոշ կը
ցուցնէ նորա բնաւորական գծերն, հրմ-
տութեան չափեր և գրչի յատկութիւն-
ներ:

Արծրունի մեռաւ արդարեւ երիտա-
սարդ, թէպէտ մեռաւ ի հասակի 48 ա-
մաց: Նորա մտային ոյժն ու գործունէու-
թիւն դեռ բարձրացող շրջափոխութեան
մէջ գտնուող գործիչի էին: «Էվէլինա»
կամ հոգեբանական ուսումնասիրութիւն
մի մասնագետնող իւր այն վէպ որ 1891
ին ՄՇԱԿի մէջ հրատարակուեցաւ, նոյն-
պէս կը ցուցնէր թէ հեղինակն դեռ կ'ա-
ճէր ու կը շօրանայր, և թէ քաղաքա-սո-
սեական մասնագիտութենէն զատ, որոյ
վարդապետ (docteur) էր Հէյտէլպէրկի
համալսարանէն վկայեալ, հմուտ էր ու-
րիշ շատ ուսմանց:

Եղած են ու կան մեր գրական ասպա-
րէզի վերայ ուժգին գրողներ, բայց նման
սակաւաջուր գահավէժ վտակի. Արծրունի
եղաւ գաղափարաց առատութեան կողմա-
նէ յորդաՀոս հոսանքի նման, և հոսելու
եղանակին կողմանէ՝ ժայռերու և խորտու-
րորտ յատակի զարնուելով սրտագոչ և
ահեղասաՀ ընթացող գետի նման:

Արծրունի կը նշանակէ, ի հակիրճ
բան, առատութիւն և սաստկութիւն մի-
ացած: Նա իւր կենաց ընթացք կատարեց
չարունակ ապահօրէն զարնուելով արգելք-
ներու և կոյր կամ հաշուեալ դիմագրու-
թեանց ժայռերու և մաշեցունելով, խախ-
տելով, ի բաց գլորելով կամ խորտակելով
վազեց զնաց անդադար և անդիմադրելի
ուժգնութեամբ:

Բ

Առնունք այժմ ՄՇԱԿ թերթն, այդ
մարմնացումն Արծրունեոյ, և դիտենք
զայն:

Միջակ ծաւալով 4 երեսնաց թերթ մի
է այն: Պարզ, մաքուր, կոկիկ երեւու-
թով: Անունն է ՄՇԱԿ, բառ որ ազնուա-
պետական, ուսումնական, հպարտ հնչում
չունի. հասարակութեան ստուար, գեղ-
ջուկ մասի անունն է այն, և հասկանալի
ամենուն: Նոյն իսկ «Մշակ» անունին վերջին
ստորիճանի պարզ, գրեթէ գեղջուկ մշակի
ձեւքով գրուած այդ չորս գրեր, որք կե-
ցած են թերթին ճակատն, կը թուին այն
մտքին խորհրդանշին (symbole) լինիլ թէ
թերթը Հայ հասարակութեան ստուար և
կոշտ զանգուածին մշակումն ունի նպա-
տակ:

Թերթին հայերէնն ալ յաճախ ամբո-
խի լեզուին չափազանց մօտ է: Նաեւ յա-

ճախադէպ են օտար լեզուաւ բառեր, կի-
սով չափ ուսացած և կիսով չափ հայա-
ցած: Խմբագիրն յայտնապէս նախադրա-
ղեալ է արտայայտելու գաղափարներովն,
առանց շատ փոյթ ընելու թէ ինչ ձեով
պէտք է արտայայտել: Չերեւիր թէ Արծ-
րունի իւր յօդուածներ շատ սրբազրած
լինի բացատրութեանց ձեւին մէջ — որ
գրելու արուեստին գեղեցկագիտական տե-
սակետին շատ ուշադրութիւն նուիրած
լինի: Նա գատապարտեալ հնութիւններ
հիմնադատակ ընող գործաւորի պէս է, կը
զարնէ հուժկու բաղուկներով, կը տեղայ
ահագին հարուածներն, և փոյթ չունի
թէ որքան վայելուչ են իւր բազկի շարժ-
մունք կամ իւր կացք ու գնացք:

Ոճի կողմանէ Արծրունի Փռանոացի
չէ, այլ յաւէտ գերմանացի: Կ'ըսէր ինչ
որ կը խորհէր, որպէս կ'ընէ գերմանացի
հեղինակն, առանց բծախնդիր լինելու
ձեւերու մասին, և մինչև անգամ պար-
զութեան մասին, որ Փռանոացի գրողին
յատկութիւնն է:

Մեր թրքահայ գրագէտներու մեծ
մասն, թէև ոչ աւելի Փռանոագէտ քան
զԱրծրունի, շատ աւելի Փռանոական են
ոճոյ յատկութեանց տեսակետով: Նոցա
մէջէն լաւագոյն գրողներն կը գրեն Փը-
ռանոացիի պէս պարզ և միանգամայն գե-
ցիկ ոճով: Արծրունեոյ հայերէնն չէր գե-
րագանց, և ոչ ալ ոճն պարզութեան և
գեղեցկութեան օրինակ:

Եւ այս շատ զարմանալի չափով երե-
ւի երբ յիշենք թէ նա, ընտանեկան պա-
րագայից բերմամբ, ուսերէն, գեր-
մաներէն և Փռանոերէն ուսած է նախ, և
ապա, այն է 12 տարեկան հասակէն՝ ըս-
կաւած է ուսանիլ Հայերէն:

Կը կարծենք կարենալ վստահօրէն ը-
սել թէ Արծրունի աւելի հմուտ էր վե-
րոյիշեալ երեք օտար լեզուաց քան Հայե-
րէնի: Այս պայմանք կը բացատրեն մեզ
թէ ինչու անրաւ էին նորա ըսելիք և ան-
բաւական նորա Հայերէնն:

Գ

Արծրունեոյ գորութեան մեծ գաղանիքն
դեռ չյիշեցինք:

Արծրունի չէր լինէր Արծրունի եթէ
մարտնչող արամադրութեան հետ ունե-
նար մեծաքանակ հմտութիւն, և այլ ոչ
ինչ:

Նորա արժէքը կշռելու համար, նժարին մէջ պէտք է դնել ոչ միայն նորա իմացականն այլ և զգացականն ու կամականն. նորա սկզբունք, նորա բնաւորութիւն:

Արծրունի ինչպէս անսովոր ազահու-թեամբ կը խնդրէր զճշմարտութիւն երբ ուսանող էր, նոյնպէս և անսովոր համարձակութեամբ կը գրէր զճշմարտութիւն երբ խմբագիր էր:

Արծրունւոյ հայրն, զօրավար Երեմիա, ճանաչուած էր իբրեւ ուղիղ մարդ, թէ և արտակեցրոն և զժուարամատչելի մարդ: Գրիգոր Արծրունի ևս էր գերազանցապէս ուղիղ, պարկեշտ մարդ, և կը կրէր ի սրտին արդարութեան կիրքը:

Երբ 1872ին հիմնեց նա զՄՇԱԿ, իրեն կուսակիցներու բաղմութիւն չունէր, և մինչև ցումհալ նա ժողովրդականութիւն չահելու համար չգիջաւ ամբողջի կիրքերն չոյել, չգիջաւ կղերին, իշխանաւորին ու հարստութիւն համակրանքն գրաւելու համար նոցա մերձաձայն երևնալ: Ընդհակառակն քարոզած է նա միշտ ծայրագոյն անկեղծութեամբ, հաւատարմով թէ ճշմարտութիւնն զօրութիւն է և ինքնին կը բաւէ յաղթահարել վերջապէս ամեն հակառակորդ:

Արծրունի գաղափարեան (idealiste) մի էր և բարետես մի: Նա համոզուած էր թէ մարդկային բնութեան խորն կայ ճշմարտութեան և արդարութեան սէրն, և թէ՝ հեռւտպէս՝ հերիք էր որ հրապարակապիւրն ջանայր պարզել, քարոզել միշտ ինչ որ ճշմարիտ է, վստահ լինելով թէ ժողովուրդն պիտի ընդունի և պաշտէ զճշմարտան երբ հասու լինի այնմ:

Արծրունի իւր դէմ հանած է կեղծաւորներու բաղմութիւն, բայց յարատե քարոզելով ուղիղ և լայն մտքեր, կամաց կամաց յաջողեր է հասկացող և ազատամիտ կուսակցութիւն մի ստեղծել:

Արծրունի սրբան մեծ է քան այն խեղճուկ լրագրողներն որք իրենց յօդուածի անմիջական սակաւօրեայ տպաւորութիւնն, վաղուան վաղանցիկ յաջողութիւնն ի նկատի ունին, փոյթ չէ թէ միւսօր, միւս տարի մերկացուի իրենց խայտառակութիւն:

ՄՇԱԿ յանձն առաւ նախ նեղուիլ, հալածուիլ, չյաջողիլ, հաւատոյ աչօք դիտելով հեռաւոր ապագայն երբ մար-

դիկ պիտի տեսնէին իւր խորհրդոց լայնութիւն և սկզբանց բարձրութիւն ու պիտի յարէին այդ սկզբանց:

Ի հարկէ քաջամարտիկ խմբագիրն մեծածած պայքարներ մղած է իւր քսանամեայ ընթացքին մէջ: ՄՇԱԿի մեզ ծանօթ վերջին երկու տարիներու մէջ մղուածն, իւր կրօնական հանգամանաց բերմամբ, քան զամենայն փափուկն եղաւ, և քան զամենայն կարեւորներէն մին: Քանի մի տողի մէջ պիտի ջանամք ամփոփել զայդ պայքար, որ կը ծառայէ Արծրունւոյ ազատականութեան ծայրագոյն սահմաններն մեզ պարզելու:

Պայքարն սկսաւ երբ, կաթողիկոսական ընտրութեան համար—որոյ արդեամբ Հայոց Հայրիկն ընտրուեցաւ Հայոց Հայրապետ—Արծրունի ինքզինք իբրեւ թեմական պատգամաւորութեան ընտրելի ներկայացուց:

«ՄՇԱԿի» հակառակորդ թերթերն, մասնաւորապէս ԱՐՁԱԳԱՆՔ, որոյ խմբագիր Մեծայարգ Արգար Յովհաննիսեան ևս էր թիկնածու, մրցեցան և ջանային Արծրունւոյ ընտրելութիւնն ջախջախել ի մէջ բերելով ինչ որ նա 20 տարիէ ի վեր ըսած էր Հայ եկեղեցւոյ մասին:

ԱՐՁԱԳԱՆՔի մէջ կոչում եղած քաղուածներէն կը տեսնուէր թէ ՄՇԱԿ ի՞նչ գայթակղալից խօսքեր ըրած է: Օրինակի համար, 1882ին, ի թիւ 236 ըսած է եղեր թէ «ճշմարիտ քաղաքական թերթը իրաւունք չունի որ և է կրօն ունենալ: «Մշակը» ոչ լուսաւորչական լրագիր է, ոչ բողոքական լրագիր, ոչ էլ կաթողիկէ լրագիր... Մշակը Հայոց լրագիր է...»

Ուրիշ ամբաստանութիւն մ'ալ այն էր թէ ՄՇԱԿ եկեղեցւոյ ինչ ինչ բարեփոխութիւններու պէտքն զգալի նկատած է: «Արձագանք» իւր (1892) թիւ 11ով բացատրեց թէ եկեղեցին անբարեկարգելի է, և թէ Հայրապետի «առաջին և գլխաւոր պարտքն» է «անվթար պահպանել» եկեղեցին, կը վերջացունէ զյօդուածն սա բացագանչութեամբ. «Օ՛ն ուրեմն մերկայէ՛ք այն դիմակները, որոնք կամենում են մեր սրտնեղեց դարեայ սրբութեանը ձեռնամուխ լինել»:

Արծրունի խուսափուկ բացատրութիւններով դուրս ելնել չաշխատեցաւ այն կացութենէն ուր իւր մրցակիցք իբրեւ անել նեղութեան մէջ գինքը ձգած

լինել կը կարծէին: Իւր հակառակորդաց դէմ՝ ճակատաբաց կեցած՝ յայտարարեց թէ ինքն պատրաստ է կրկնելու ինչ որ ըսած է յանցելումն, և քանի մի խմբագրականներով շեշտեց իւր վաղեմի սկզբունքներ: Ըսաւ, եղական համարձակութեամբ մի որ տկարամտաց կրնար թուիլ անխոհեմ ինքնադատապարտում, ըսաւ թէ «... Ինչպէս քաղաքական կեանքում, այնպէս էլ հոգեւոր կեանքում» բազմատեսակ ուղղութիւնները, կուսակցութիւնները (եթէ միայն իրանք ճշմարիտ համոզում կուսակցութիւններ են), առաջդիմութեան նշաններ են: ... Ազատամիտ և ազգասէր հայ-կաթողիկէ և հայ-բողոքականը աւելի լաւ է կաթողիկէ կամ բողոքական միան, որպէս զի ազատամտութեան և ազգասիրութեան խմոր դառնան իրանց դաւանակիցների շրջանում: ... Մի քաղաքական թերթի խմբագիր, ինքն անձամբ կարող է լինել լուսաւորչական, կաթողիկէ կամ բողոքական, բայց նրա հրատարակած լրագիրը պէտք է անբողջ ազգի շահերին ծառայէ: ...» Երկարօրէն բացատրեց նաև թէ ինչ ըսել կ'ուզէ եկեղեցական բարեփոխում ըսելով, «վերադառնանք մեր սկզբնական և մաքուր լուսաւորչական եկեղեցուն» ըսելով: Յուշեց թէ լուս. եկեղեցւոյ կրօնական, էական մասը անփոփոխ մնացած է, և զայն այժմ ալ փոփոխելու վերայ խնդիր չկայ: այլ «մշտական, անփոփոխ, յաւիտեական գաղափարն իր մէջ բովանդակող ձեւը, կազմակերպութիւնը» հնացեր է, հետզհետէ բարդուող արտաքին ձևականութենէն կլլուեր է: «Միթէ այն, ինչ որ ստեղծել է չորրորդ դարի Հայ ազգի սերունդը, չէ՞ կարող վերանորոգել նոյն ազգի քսաներորդ դարի սերունդը: ... Եթէ կը հերքենք մեր այդ իրաւունքը — դրանով կը հերքենք ուրեմն և մշտական յառաջդիմութիւնը: ... Եթէ այդ եզրակացութեանը հասանք որ հերքեցինք, ուրացանք ժամանակակից խաչապաշտների գոյութեան օգտաւէտութիւնը, ինչպէս են ներսէս վարժապետեան, Մկրտիչ Սրբի մեան ու Արիստակէս Սեդրակեան, — ուրեմն պէտք է ուրանայինք և այն մեր հին և իրանց ժամանակին խառ ժողովրդից և ինտելիգենտ խառարամիտներից նոյնչափ հալածուած Գրիգորների, Սահակների, Մեսրոպների, Մովսէսների ու ներսէս-

ների գոյութեան օգտաւէտութիւնը:» (Մ-ՇԱԿ, Թիւ 9, 1892)

Արծրունի բարձրաձայն հռչակեց այսպիսի մտքեր, և ի վերայ այսր ամենայնիքուէից մեծամասնութիւն շահեցաւ ու պատգամաւոր գնաց յէջմիածին:

Դ.

Թողլով մասնաւոր վիճաբանութիւններն ու խնդիրներն, հարցնենք թէ Հայ ազատականաց պետն ի՞նչպէս կ'ըմբռնէր ազատականութիւնն:

Շատ դիւրին է այլ և այլ մասնաւոր խնդրոց վերայ նորա յօդուածներէն հանել և վերացունել յստակօրէն նորա ազատական սկզբունքն:

Արծրունի ազատական էր, այսինքն բացարձակ և անպայման յառաջդիմական: Նա չէր ուզեր նախապաշարմանց, աւանդութեանց առջև խոնարհիլ պատկառանք, և չէր ուզեր որ Ազգն հնութեանց ու սրբազնութեանց ազդեցութենէն դիւթուած՝ դանդաղէր դէպ յառաջ երթալու մէջ — որ հայկական իրն արգելք լինէր համաշխարհային քաղաքակրթութեան տարրերն Ազգին մէջ մուծանելու, և ժողովուրդն նոր կենօք ներշնչելու: Աղգային լեզու, աղգային հաստատութիւնք և աղգային եկեղեցի Ազգին համար են, ոչ թէ Ազգն դոցա համար է. ուրեմն ոչ միայն իրաւունք այլ պարտք է հաստատութիւններն բարեփոխել և դարուն զարգացեալ պայմանաց բարձրութեան վերածել յօգուտ և ի ծառայութիւն ժողովրդին:

Ասոր հակադիր կուսակցութիւնը կը կոչուի պահպանողական: Պահպանողականը կը բաղձայ պահպանել ինչ որ արդէն կայ, և գոյ եղած հաստատութեանց մէջ փոփոխութիւն մուծանելու դէմ: Այսու ամենայնիւ պահպանողականն ալ յառաջդիմութեան ջատագով է: Սակայն խիստ պահպանողական լինիլ և միեւնոյն ատեն յառաջդիմաւոր՝ կը թուի հակասական. յառաջ երթալ առանց բարեփոխութեան՝ անհասկանալի է: Անփոփոխութիւն և միօրինակութիւն նշան են մեռելութեան: Ինչ որ կեանք ունի, ինչ որ կ'ապրի, կը աճի կը զարգանայ, ուրեմն և կը կրէ փոփոխութիւն ի հարկէ: Մեռած ծառն, մեռած լեզուն, մեռած ընկերութիւնն, մեռած հաստատութիւնն է որ այլ ևս չաճիր

և չկրեիր եղանակաւորութիւն: Այդպէս է օրինակի համար, հայերէն գրաբար լեզուն, մեռած լեզու, զոր աշխարհի բոլոր հայ հանճարք չեն կարող աճեցունել, զարգացունել իւր ընական շնորհալի զօրութեան ուղղութեամբ—թէ և կրնան սմանք յամառիլ գրաբար մասնազերելու, և գրաբարն խանդարելու: Մեռած ծառին առ ինչ կը ծառայէ արեւուն ջերմութիւնըն ու անձրեւի տարափն—եթէ ոչ փտեցունելու: Տաղանդաւոր գրողին ալգիստութեան լոյսն ու զգացմանց ջերմութիւնն միթէ աւելի կրնան ծառայել զգրաբարն զարգացունելու երբ նորա արմատն չորցած է, և կենդանեաց աշխարհէն—ապրող ժողովրդէն—դուրս ձգուած: Գրաբարի պահպանողական լինելու այդ կերպն յաշտ ազատականին շատ դժբաղաւ կերպ մ'է զգրաբարն ու զմեր նախնիս յարգելու: Գրաբարն յարգելու ազատական և ճշմարիտ կերպն է առնուլ այդ սքանչելի՝ թէ և մեռած՝ լեզուէն այնքան պատուական տարրեր որքան հնար է մեր այժմու կենդանի հայերէնն սնուցանելու և զօրացունելու համար:

Ազատական Արծրունեոյ և իւր Դպրոցին համոզմամբ, յառաջդիմական, զարգացող, հետեալէս բարեփոխելի պէտք է լինի նաեւ եկեղեցական կազմակերպութիւնն: Զայդ կազմակերպութիւն անձնոնմիւնելի, անհպելի, անբարեփոխելի հոշակել՝ զայն մեռեալ հոշակել է, եթէ զարգացման սկզբունքն իսկ ուրանալ չէ:...

Աղաղականն կը յարգէ նախնի հայրապետներն, բայց կը հաւատայ թէ Ազգի մէջէն որքան մեծ հայրապետներ որ կըրնային ելնել, արդէն ելած և ազգային հանճարն սպառած չէ,— թէ այժմ ալ կրնայ նոյն Հայ Ազգն մեծ հայրապետի ծընունդ տալ, և ներկայ ժամանակաց հայրապետն ալ՝ նման հնոյն՝ կարող է հայկական ոգւով և հանճարով բարեփոխել, զարգացունել ինչ որ ի նախնեաց հասած է մեզ:

Այսպէս ազատականն աւելի մեծ հաւատք, մեծ յարգանք ունի Ազգին վերայ քան թէ հնապաշտ պահպանողականն:

Հայ Ազգն յառաջ գնաց և կ'երթայ ազատականաց շնորհիւ: Պահպանողականաց քիչ նախնածելի դերն է ազատականաց քղանցքէն քաշել որ շատ արագ յառաջ չվազեն ու վտանգի գարնունին:

Սխառ պահպանողականներու կարգին մէջ ունիմք եւրոպեան համալսարաններէ վկայեալ մարդիկ ևս, որք մասնագիտի յատուկ եղող անձուկ և խեղճ հայեացներ կը ջատագովեն իրենց մասնագիտութենէն դուրս գտնուող խնդրոց վերայ:

Ինչ պարմանք եթէ ամեն ուսանող չուսանիր, եթէ ամեն ով որ կ'ուսանի՝ չգիտնար, եթէ ամեն գիտցող չգգար, և ամեն գիտցող Արծրունեոյ կամքը չունենար:

Արծրունի կրնայ շատ սխալներ գործած լինիլ իւր ազատական սկզբունքն զանազան խնդրոց լուծման համար ի գործ դրած ատեն, ըստ սրում սխալական էր և չէր ամենագէտ. բայց նորա սկզբունքն ուղիղ, բարձր, լայն և վսեմ է:

Արծրունի սկզբունքի մարդ էր գերազանցապէս:

Նա երբէք, որքան գիտենք, չչողութեց, չստեց, չզրպարտեց իւր սկզբունքն յաղթանակն դիւրացունելու համար:

Նա կը գարչէր ճիշդութեանէ և կը հարուածէր ճիշդութեան:

Արծրունի ժիւղարու մեծ Հայերու մեծագոյներէն մին եղաւ:

Եւ երբ ազգն քիչ մ'աւելի զարգանայ և աւելի լաւ ըմբռնէ նորա սկզբունքն իրկուէտ ուղղութիւնն, պիտի համոզուի թէ Արծրունի իրօք մեծագոյն ևս էր քան ի կենդանութեան մեզ կ'երևէր:

Փ Ո Ւ Ն Ս Ս

ԱՌԱՋՆՈՐԴ ԵՒ ՕՐԻՆԱԿ ՀԱՄԱՅՆ Ա.ԶԳԱՅ

Ֆռանսայի նայեցէք, Հայեր:

Ահաւոր տեսարան մի կը ներկայանայ եւրոպայի կեդրոնին, Ֆռանսական մայրաքաղաքին մէջ: Գերմանիա կամ այլ պետութիւն չէ պաշարած զՓարիզ, թնդանօթք չեն որոտար, Գոմիւնիստք չեն կործաներ ամեն ինչ, արիւն չհոսիր փողոցաց մէջ, և սակայն պատերազմ կայ, քաղաքային պատերազմ, Ֆռանսայիք Ֆռանսացւոյ դէմ են ելեր, իրենց սուր գրիչն է, իրենց թնդանօթ բերանն է, կը խոցեն

իրախու սիրտ, կը վիրաւորեն միմեանց պատիւ, տիրոջ կը հոսի արեան տեղ և կ'առնու կը տանի աւագ մարդիկ, երեսփոխաններ, լրագրագետներ, նախարարներ ու նախարարապետներ, և ցեխի ալիքը կը բախեն մինչև իսկ նախագահ Գառնոյի դռներն . . . :

Ինչ տեսարան է այն, ինչ է անոր նշանակութիւնն :

Ըմբռնելու համար անոր նշանակութիւն պէտք է յիշել թէ Ֆռանսա ազգայ առաջնորդն է, երբ հզօր է ու երբ տկար, երբ փառաւորեալ է ու երբ կոխոտեալ, երբ ազնուութեան ու մեծութեան տեսարան դառնայ ու երբ տղմի մէջ թաւալի, Ֆռանսա միշտ եւրոպական ազգայ առաջնորդն, պարագլուխն կը մնայ :

Ֆռանսա է Եւրոպայի սիրտն . հոն, Բարիքի մէջ ինչ որ ներկայանայ, քաղաքակիրթ աշխարհի ներքին վիճակն կը թարգմանէ, և այն քայլն զոր Ֆռանսա կ'առնու, կը նշանակէ Եւրոպայի յաջորդ քայլն :

Գերազանցապէս զգայուն և անկեղծ այդ Ֆռանսական ժողովուրդ իբրև ջերմօրէն կը ցուցնէ լիովին և որոշ թէ ինչ աստիճանի մէջ է Եւրոպայի ընկերային կացութիւնն, և կը գուշակէ թէ ինչ պիտի պատահի :

Եւրոպական ազգայ մէջ Ֆռանսա է որ իւր յատուկ գրականութիւն սկսած է նախ և առաջ ունենալ . Փարիզեանն եղած է Եւրոպայի հնագոյն համալսարանն կամ համալսարանական սաղմն . Ֆռանսա գործած է առաջին մեծ յեղափոխութիւնն յորմէ Եւրոպա օգտած է . Ֆռանսա նախ ըսկսած է չհաւատալ, նիւթապաշա լինիլ . Ֆռանսա նախ սկսած է չաճիլ, և հիասթափիլ նիւթապաշտութեան երանութեանէն և Ֆռանսա է որ այժմ կը միտի վերստին դառնալ յիտէականութիւն և ի կրօն :

Ֆռանսա, այդ ուշիմ և զուարթ, բայց թեթեւ, փառասէր և ամբարտաւան ազգ բարձր իգլուխ և յանդուգն ինկած է Եւրոպայի առջև և կ'երթայ յառաջ, ամենէն յառաջ իյնալով փոսն ու ելնելով փոսէն, պատժուելով, խրատուելով ու զգաստանալով յորինակ և ի զգուշութիւն Եւրոպայի :

Նայեցէք Ֆռանսայի, Հայե'ր : Դիտեցէք այն տեսարան որ երեք ամսէ ի վեր

կը ներկայանայ ի Փարիզ :

Ներկայացման անունն է ԲԱՆՍՄԱ :

Համառօտիւ, ներկայացման նիւթն սա է : Բանամայի բաղձացեալ ջրանցքն բանալ ձեռնարկած էր ընկերութիւն մի, որոյ գլուխն էր Ֆէռտինան տը Լէսէփո, այն մեծանուն Ֆռանսացին որ Սիւէզի ջրանցքն բացեր էր արդէն ի մեծ ապշութիւն աշխարհի : Ֆռանսական հասարակ ժողովուրդն իւր խնայողութեանց ահագին մէկ մասն վստահեցաւ այդ ընկերութեան, չահելու յուսով, և այն վստահութեամբ թէ նա որ Սիւէզի ջրանցքն բացած էր, անշուշտ գիտէր թէ կրնար զԲանամային ևս բանալ : Գործին առաջին դժբաղդութիւնն այն էր որ ջրանցքն չէր կրնար բացուիլ աւարտիլ դրամագլխոյ ու է բանաւոր չափով, և երկրորդ ու մեծագոյն դժբաղդութիւնն ալ այն եղած էր որ ձեռնարկին գլուխն եղող մարդիկ, տընօրէնք, զժողովուրդն իւր ցնորից մէջ որքան հնար է երկարագոյն ժամանակ պահելու և դրամ քաշելու նպատակաւ սկսած են կաշառել լրագիրներ, երեսփոխաններ, ազդեցիկ մարդեր ու կառավարական աւագ որեւոր : Եւ կաշառեալք ամենայն աչք փոցած են կամ յաջողութեան թմբուկն զարկած ի խնդութիւն պարզամիտ ժողովրդեան : Այլ ամեն բան ունի իւր վախճան : Հարիւրաւոր միլիոններ ջրանցքին անունով բայց ջրանցքէն դուրս այնպէս խօշ անպարկեշտութեամբ վատնուած լինելէ յետոյ, բանն երեւան ելաւ :

Եւ ի՞նչ է երևան ելած բանն : Նախ այն թէ աշխատող ժողովրդեան քրտանց արդիւնքն եղող միլիոնաւոր Ֆռանքներն կորսուած են . երկրորդ այն, որ աւելի սոսկալի է, թէ ժողովրդեան առաջնորդներն, գործիչներն, մեծերն, կառավարիչներն եղող բարձրագոյն դասերն են որ դիտութեամբ և անհաւատալի կեղծաւորութեամբ այդ խաղ խաղացած են — ժողովուրդն կողոպտելու գիրար համուզած են ու իբրարու համաձայնած . . . :

Ուրեմն խնդիրն լոկ Բանամայի ընկերութեան խնդիր չէ, այլ Ֆռանսայի հանրային մարդոց և կառավարող դասուն բարոյական վիճակին, գործելու սկզբունքին մեծ դնդիրն է :

Կաշառեալներու մէկ մասն արդէն յայտնուեցան, խոստովանեցոն, խայտա-

ռակուեցան. բայց ոչ սակաւք և ի նոցանէ որք կաշառեալ չէին ու ուրիշներն ամբաստանելու զբաղեցան, նոյնպէս ցուցին իրենց անխղճամտութիւնն ու գծծութիւնն:

Բովանդակ գործն անօրինակ մերկացում մ'էր խնամով թաքուցուած բարոյական ապականութեան:

Ֆռանսայի խորհողներն իրենք իսկ իրաց այս ահաւոր նշանակութիւնն ընդունեցան ու հռչակեցին: Ահա թէ ինչ ըսաւ Փռանսացւոց մեծագոյն Հանդէսն, (Ռեվիւ տէ Տէօ Մոնտ, Յունվ. 15, երես 468)—

«Բանամայի այս աղետաւոր գործը... նշան մի միայն է ժամանակաց. տեսանելի վախճանն է այն՝ իրաց կարգի մի որ դատապարտեալ է իւր գործերով և իւր արդեամբ: ... Տիրելու տենչացողներուն աչքին էական բանն էր պահել հանրապետական մեծամասնութիւնը, և մնալ տէր:

Բռաւական էր որ ինքզինք հանրապետական կոչէր կամ հանրապետական շահերն պաշտպանել յաւակնէր ոք, ... աւամեն ինչ կրնար ընել առանց խղճահարութեան: ... Իրողութիւնն այն է թէ հանրապետական շահուց ծառայելու պատրուակաւ՝ սոփորած են այլ ևս չգտնողանել չարն բնորէն, և չարաչար գործածել ամեն ինչ: Կարծած են թէ ամեն բան թոյլ տրուած է իրենց: Ահա այդպէսով աստիճանօրէն կազմուած է դրութիւն մի յորում ամեն ինչ բթացած է, բարոյական զգացումն բթացած է, ինչպէս օրինաց, արդարութեան, պետութեան իրաւանց, կառավարութեան հեղինակութեան, զգացումն: ...»

Այդ է ահա այս արտաքին ցնցումներըն յառաջ բերող ախտին ներքին բնութիւնն— բարոյական զգացման, պարտուց զգացման բթացումն, յորմէ ծագած է նաև կառավարողներու ներքին ուժի նուաղումն, կէս-անխիշտանական վիճակ մի, անխիշտանական տարրներու գոռալու համարձակութիւնն, նախարարութեանց տրագ արագ անկումն, այնպէս որ կը վախճուէր թէ նախագահ Գառնոյ մօտ էր նոր նախարարութեան մի կազմաւորումն անհնար գտնելով ինքն ևս հրաժարելու, և Գառնոյի անկումն, այդ ճգնաժամի մէջ, պիտի նշանակէր Փռանսական Հանրապետութեան անկումն:

Ինչ յստակ դաս, ինչ պայծառ օրինակ է այս ցուցնելու թէ երբ մարդիկ մի-

ջոցներն պաշտեն, նպասակն կը կործանեն: Այն հանրապետական կուսակցութիւն որ ինքզինք յիշխանութեան պահել աշխարհի փրկաւէտ կը համարէր երկրին որ զիւր կուսակցութիւնն զօրաւոր պահելու համար անպարկեշտ միջոցներ գործածելու անգամ խիղճ չէր ըներ, Հանրապետութեան հիմերն կը քանդէր:

Պատմութիւնն բիւր անգամ ապացուցած է թէ անպարկեշտ, անխղճամիտ միջոցներն չեն կրնար ծառայել բարի նպատակաց վերջնական յաջողութեան, և սակայն մարդիկ նոյն աղետալի սխալն կը կրկնեն անդադար:

Ըսել չենք ուզեր թէ Ֆռանսայի մէջ կուսակցական ապականութիւնն աւելի յառաջ գնացած լինի քան ուրիշ երկիրներու մէջ: Ինչպէս արդէն նշանակեցինք, Ֆռանսայի մէջ ինչպէս ազնիւն քաջ կը փայլէ, նոյնպէս ապականութիւնն սոսափիկ կը հոսի, որպէս գի աշխարհ համօրէն տեսնէ և զգայ ու խրատուի:

Ֆռանսայի այս խայտառակութիւն մեզ Հայոցս համար մեծ դաս կ'ընծայէ:

Մեծ դասն այն է թէ երկիր մի—Հայաստան—չկրնար յաջող և հզոր լինիլ լոկ կառավարական դրութեան շնորհիւ, կամ թէ միապետութեան տեղ հանրապետութիւն, և մինչ իսկ հանրապետութեան տեղ ընկերվարականութիւն հաստատելով. թէ վարչական դրութիւնն, որքան ալ ազատական լինի, վերջապէս ձև մ'է, և ձևն, որքան ալ կարեւոր և անհրաժեշտ լինի, չէ էականն, ոգին է էականն, հանրային ոգին, արդար օրէնքներ հաստատելէ յետոյ՝ արդար օրէնքներն յարգելու ոգին:

Պատմութեան ահաւոր դասերուն նախելով է որ մեք «Հայք»ի մէջ երկու բանի վերայ միանգամայն կը պնդենք. — արտաքին բարեկարգութեան և միանգամայն ներքին բարեկարգութեան հարկին վերայ — օսմանեան բռնապետութեան լծէն ազատելու վերայ և միանգամայն մեր բնաւորութիւնն ազնուացնելու, հիմարտութեան սէրն, արդարութեան կիրքն ի մեզ մշակելու հարկին վերայ:

Միայն օտար ազգաց պատմութեան դասերն չեն որ զմեզ այս կրկին բարեկարգութեան վերայ խօսելու կը ստիպեն, այլ և մեր անձնական դիտողութիւնն ու փորձառութիւնն ազգային գործոց չըջանին

մէջ, մեր գաղթային ընկերութեանց մէջ:

Հա՞րկ է ըսել թէ մեծ ու փոքր ազգաց, մեծ ու փոքր ընկերութեանց ճակատագիրն վարող օրէնք միևնոյն են:

Ինչ որ Ֆռանրայի վերայ կը դիտեմք, նոյնն կարող եմք դիտել ու տեսնել, թէ և փոքր համեմատութեամբք, մե'ր ևս մէջ:

Եւ ինչ կը դիտեմք:

Կը դիտեմք թէ մեր մէջ ալ կան կուսակցութիւններ ա'յնքան իրենք իրենց ազգային շահեկանութեան վերայ յոյս դրած՝ որ իրենց զօրութիւն և ազդեցութիւն պահպանելու համար խիղճ չեն ըներ ուրիշ կուսակցութեանց դէմ՝ անպարկեշտ ու անբարեխիղճ միջոցներ գործածել:

Արդիւքն ալ միշտ նոյն է — ակարութիւնն ա'յն կուսակցութեան որ ինքզինք զօրացունելու համար անպարկեշտ անարդար միջոցներու դիմեց՝ կարծելով թէ բարի նպատակն կ'արդարացունէ զչար միջոցն:

Մեք կարող եմք ճշդիւ նշանակել անձինք որք կարգաւով այս կամ այն թերթի մէջ անհետեւ զրպարտութիւններ և անխիղճ բաղդատութիւններ, վշապխառն զայրութիւն ետ դրկած են թերթն առ խմբագիրն և իւզած են իրենց յարաբերութիւններ:

Մարդ որքան ալ հզօր լինի կամ կարծէ ինքզինք, պարտի գիտնալ, և եթէ չգիտէ պիտի սովորի փորձիւ, թէ բարոյա կան օրէնք աւելի հզօր են:

Խօսք մ'ալ մասնաւոր ընկերութեանց մասին, և վերջացունենք:

Ընկերութիւններ կան սրբ տարի կը վտանեն իրենց կանոնադրութիւն շինելու, յաճախ կը շինեն ալ լաւ կանոն ու օրէնք. և յետոյ կը սկսին այդ օրէնքներու հակառակ գործել, կամ հակառակ գործող անդամոց առջեւ թոյլ կը գըտնուին: Ոմանք ալ օրէնքի տառն պատուակ ընելով՝ առ ոտն կը կոխեն ամեն քաղաքավարական, ամեն բարոյական օրէնք: Այնպիսի ընկերութիւնք ալ չեն կարող ապրիլ ու զարգանալ — և եթէ տկար կեանք մի պահպանեն ալ, ախտաւորիչ և ոչ թէ շինիչ դեր կը կատարեն:

Օրէնք չինել և լաւ չինել դժուար է, բայց օրէնքներն ի գործ դնել անձամբ և այլոց ալ սալ ի գործ դնել, շատ աւելի դժուար է:

Մեք պիտի միշտ և անդադար պընդեմք թէ մեր ընկերութիւնք պէտք է իրենց մեծագոյն ծառայութիւնն համարին անդամներն թեքել ու սովորեցունել օրէնք յարգելու:

Մեք միշտ պիտի պնդեմք թէ Հայաստանի համար լաւ վարչութեան և լաւ օրէնքներու հետ պէտք է ջանալ պատրաստել լաւ օրէնքներն պահելու կարող առաքինի և բարեխիղճ քաղաքացիներ:

Փռանսայի նայեցէք, Հայեր:

ՆԵՄՆԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս, 10 Փետր. 1893

Նորենոր դէպքեր յիշելէ առաջ պէտք է ակնարկեմ այն կարեւոր դարձուածներուն որ լեցինք թէ Փոքր Ասիոյ ներքին քաղաքացի ոմանց մէջ պատահած են: Ամասիոյ, Սամսոնի, Սեբաստիոյ և այլ քաղաքացի բոլոր մզկիթներուն, կառավարական պաշտօնատանց, եկեղեցեաց և դըպրոցաց պատերուն վրայ յայտարարութիւններ փակցուած էին, օսմանը ստորագրութեամբ և զՍուլթան Համիտ կը պախառակէին իբրեւ բռնակալ, գահու յայիշտակիչ, հարստահարիչ և այլն: Այդ յայտարարութեանց օրինակներն Մարսուանի օրիորդական վարժարանին պատերուն վրայ ալ փակցուած ըլլալով, — վարժարանն ամերիկեան հաստատութիւն մ'է — Հայ ուսուցիչներէն ոմանք բանտ կը դրուին, և օր մ'ալ մահմետական խուժանը կ'այրէ վարժարանը:

Նորանոր լուրեր կը հասնին մեզ Փոքր Ասիոյ կարգ մի քաղաքներու վերաբերութեամբ: Ի Կեսարիա պատահածներն շատ աւելի ծանր երևոյթ չենին քան զՄարսուանին: Թագաւորին դէմ փակցուած յայտարարութեանց խնդրոյն առթիւ Կեսարիոյ իշխանութիւնք խուզարկութեանց կը ձեռնարկեն, զինուորներ բռնի եկեղեցիներն կը մտնեն ու ամեն անկիւն կ'որոնեն զէնք ու ռազմամթերք: Եկեղեցեաց մէջ բան մի չգտնելով կը սկսին տուններն խուզարկել անկանոն և վայրագ եղանակաւ: Տանց մէջ զննանք կը գործեն, ահ ու սարսափ կը ձգեն, բայց ոչ ինչ գտնել

կը յաջողին: Ապա թուրք պաշտօնեայք կը սկսին գրգռել թուրք ժողովուրդը ընդդէմ քրիստոնէից՝ ըսելով թէ սոքա զէնք պահեր են և ապստամբութիւն յարուցանելով պիտի յարձակին մահմետականաց վրայ: Խուժանը որ արդէն պատրուակ կը փնտռէր, կը յարձակի քաղաքին պազարներէն միոյն վրայ: Պազարին մէջ ապրանք ծախողներն, որք կ'երեւի թէ ընդհանրապէս քրիստոնէայ էին, իրենց ամեն բանը թողլով կը փախչին: Յայնժամ ամբոխը ամեն բան աւարի կ'առնու: Մահմետականք կը դիմեն ապա մեծ շուկային վրայ, բռնի դրամ կը կորզեն իանութպաններէն: Այդ պահուն կառավարութիւնը կը սկսի վախել թէ գուցէ չըփոթութիւնը չափազանց մեծնայ և ստիկաններ կը հանէ ամբոխին դէմ, բայց ոստիկանք բան մի չեն կրնար ընել: Խանութպանք իրենց կրպակներն փակելով տուններն կ'ապաստանին:

Տարիչ կողմեր ձորքակալութիւններ և զած են յայտարարութեանց խնդրոյն համար՝ մեծ մասամբ քրիստոնէաներէ: Սակայն տարակոյս չկայ թէ մահմետականք կարեւոր դեր կը կատարեն այդ յայտարարութեանց գործին մէջ, եթէ իրենք չեն նոյն խել հեղինակներն:

ԱՆԱՆՈՒՆ

ՀԱՅԵՐ ՅԵՂԻՊՏՈՍ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ՄԷՋ ՅՈՒՋՄՈՒՆՔ

Գահիրէ 6 փետր. 1893

Որպէս զի եղած դարձումներն յըստակ ըմբռնուին ընթերցողաց կողմէն, հարկ է որ պատմութիւնս քիչ մը հեռուէն սկսիմ:

18.1 Սեպտ. ին կարգեալ Ուսումնական Խորհուրդը Խորէնեան ազգային երկսեռ վարժարանին բարեկարգութեան աշխատած և վերջապէս զՄեծ. Կարապետ Նուստարեան՝ փորձ դասատուն՝ հայթայթած էր, զնախորդ դասատու Մեծ. Աղազարմեանն ալ պահելով հանդերձ:

Նաւասարդեան ուսած է Երուսաղեմայ ժառանգաւորաց վարժարանը, ուր

ընթացքն աւարտելէ յետոյ Գեր Մելքիսեդեկ արք. Մուրատեանի հրաւիրանօք Զմիւռնիա կանչուած և մեծանուն Մամուրեանի ձեռքին տակ 11 տարի ուսուցչութեան պաշտօն վարած մարդ է:

Աղազարմեան առաջ բոլոր ժամանակը դպրոցին կուտար, ամսական 10 եգ. ոսկի թոշակով. Նաւասարդեանի ի պաշտօն կոչուելուն հետեւանօք, նորա թոշակը 8 ոսկիի իջաւ՝ չաբաթը 20 ժամ իբրև այցելու ուսուցիչ դասախօսելու պայմանաւ: Նաւասարդեան կ'ընդունէր 6 ոսկի ամսաթոշակ:

Աղազարմեան քիչ ժամանակէն հրաժարեցաւ բոլորովին. բայց իբրև առաջնորդարանի դիւանադպիր և իբրև առաջնորդի սիրելին, գործածեց իւր ազդեցութիւնը քաղաքական ժողովոյ անդամոց մէկ մասին վրայ և իւր վրէժխնդիր դիմադրութեան նեցուկ պատրաստեց: Քաղ. ժողովն վարժարանին ելմտացոյցը փոխեց և 36 ոսկիի տեղ 19ու կէս նշանակեց: Ուսումնական Խորհուրդը չէր կրնար այդչափով մատակարարել վարժարանը: Գրեթէ վեց ամիս թոշակը անվճար մնացին, անտուկը ստակ չկայ ըսելով:...

Սրբ. Գ. Իւթիւճեան, կաթողիկոսական ընտրութենէն վերադարձած, դժգոհ մնաց դպրոցի մէջ կատարուած փոփոխութենէն: Իրաց հին վիճակը նորոգել կարենալու համար հարկ էր տարբեր երեսփոխանական ժողով, ստարբեր քաղաքական ժողով և հետեւապէս տարբեր ալ Ուսումնական Խորհուրդ. ստեղծել: Երեսփոխանական ընտրութեանց ժամանակը հասաւ, և բուռն պայքարէ յետոյ պահպանողականք յաղթող եղան:

Նորընտիր երեսփոխանական առաջին նստին մէջ Սրբ. առաջնորդը երկար տեղեկագիր մը կը ճառախօսէ, և կ'ուզէ որ պարունակեալ առաջարկներն ընդունուին ժողովոյն կողմանէ. Այդմ կ'ընդդիմանայ ատենաւբան Մեծ. Շէրիտեան: Յաջորդ նստին մէջ Քաղաքական ժողով կ'ընտրուի:

Քաղ. ժողովոյ ա. գումարման մէջ առաջնորդը կը յաջողի ընդունիլ տալ ինչ որ դիմադրութեան բախած էր երեսփոխանական ժողովոյ մէջ: Սհա նորա առաջարկներն — (1) վարժարանը առաջնորդարանի չըջափակը փոխադրել: (2) Ուսումնական և Թաղական Խորհուրդ տիպ-

ղոտով միացեալ մարմին մը կազմել զբարոցի և եկեղեցւոյ նիւթական մատակարարութիւնն ընելու համար: (3) Դպրոցին վերին հսկողութեան հոգը յանձնել առաջնորդին: (4) Դպրոցի պաշտօնեաներն փոխել և նորեր դնել:

Քաղ. Ժողովը խնդրեց իւր ղեկավարին և ի գործ դնել կը ձեռնարկէ: Նախ վեց անձանց թաղականութեան հրահայր կ'ուղղէ, և առանց սպասելու որ սոքա առաջարկեալ պաշտօնը ընդունին կամ մերժեն, Ուսումնական խորհրդոյ ևս պաշտօնագիր մը կ'ուղղէ հրահարելով զայն պաշտօնէ դադարիլ և հետեւեալ օրն իսկ դպրոցը Տէր Մամբրէ քահանային յանձնել: Պէտք է հոս յաւելուլ թէ Քաղ. Ժողովոյ ա. նախին մէջ տրուած այս անդրանիկ որոշմունք 3 անգամոց միայն ներկայութեամբն տրուած են, և դիւանի ընտրութիւնն ալ ի բացակայութեան 2 անգամոց եղած է:

Որոշմունք Դեկ. 17ի Շարաթ օրը կը տրուին, և յաջորդ օրը, Կիրակի, Ուս. խորհրդոյ ատենապետը կը ստանայ պաշտօնագիրը, և երկտողով մի կը խնդրէ առաջնորդէն որ գործը իւր միւս պաշտօնակցաց ևս կարենալ հաղորդելու համար պայմանաժամը փոքր ինչ երկարի: Նոյն երեկոյին Նաւասարդեան ալ կ'ընդունի պաշտօնագիր մը Քաղ. Ժողովոյ կողմէն, որով կը ծանուցուի իրեն թէ հրաժարեցուցուած է ինքը իւր անօրէն դաստառի պաշտօնէն ինչպէս նաև իւր օգնական Մեծ. Ս. Անմահեան: Բնականապէս Նաւասարդեան կը պատասխանէ թէ ինքը Ուս. խորհրդոյ հրահարանօք ի պաշտօն կոչուած լինելով, նոյն Մարմնոյ միջոցաւ ևս հրաժարի հրամանն ընդունելու կ'ըստ պատէ, թէ և վերնագոյն մարմնոյ մը հրամանը լինի այն:

Ուս. խորհրդոյ ատենապետին երկտողին կարեւորութիւնն չտար Առաջնորդը: Երկուշաբթի առաւօտ Ուս. խորհրդի ատենապետը ուրիշ անդամի մը հետ կը գտնուին դպրոցը, Տէր Մամբրէ ալ հոն է և մեծաւորին հրամանաց անմիջական գործադրութիւնը կը պահանջէ— թոյլ չտար որ դասատուք դասախօսել սկսին: Ուս. խորհուրդը դարձեալ երկտողով մի կը խնդրէ որ ժամանակ տրուի, քանի որ զինքը ընտրող Քաղ. Ժողովն ալ հրաժարած չէ դեռ, և մինչև Դեկտ. 31 իւր հա-

մարատուութիւնն մատուցանելու հրահանգ ստացած է: Առաջնորդը ամենախիստ ոճով կը հրամայէ որ Ուս. խորհուրդը շուտափոյթ հնազանդի: Կէս օրէն յետոյ քահանայն կը վերադառնայ Քաղ. Ժողովոյ սրահումը գործադրելու մտօք: Նախորդ Քաղ. Ժողովոյ ատենագրի Մեծ. Շէրիաճեան ևս նոյն ատեն վրայ կը հասնի և քաղաքավարութեամբ բացատրելով եղած աճապարանքին անպատշաճութիւններն՝ կը յորդորէ որ մինչև Դեկտ. 31 յետաձգուի գործադրութիւնը: Քահանային պնդումն տեսնելով Մեծ. Շէրիաճեան կը զայրանայ և կը յայտարարէ թէ եղած որոշմունք և անոնց գործադրութեան այս յախուռն եղանակը մանաւանդ հակառակ մանադրական են ու անվայել, և կ'ըսէ Ուս. խորհրդոյ և այլ պաշտօնէից որ շարունակեն իրենց պաշտօնավարութիւնը:

Երեքշաբթի առտու երբ դասատուք դպրոց կ'երթան, կը տեսնեն թէ Տէր Մամբրէ և առաջնորդարանի բարապանը զիրենք կանխեր են: Տնօրէն Նաւասարդեան օգնականին կը պատուիրէ որ վեր ելնէ ու աշակերտաց առաւօտեան մաղթանքը երգել տայ, քահանայն դէմ կը դնէ, և Տնօրէնն կ'ընդդիմանայ քահանային: Ասոր վրայ Մամբրէ քահանայն հրաման կուտայ բարապանին բռնի դուրս նետել զայն դպրոցէն, թունա կ'ընէ վարժարանն, երկսեռ մանկտին վայնասուն կը փրցունէ, վարժուհին և հասուկ սանուհիք կուլան, ամբոխը կը ստուարանայ վարժարանին շուրջը, և բարապանը հայհոյելով, հրելով դուրս կը հանէ զՆաւասարդեան:

Հանրային ցառումն մեծ եղաւ այս դէպքին դէմ: Երկու օրուան մէջ 300 ըստորագրութեամբ հանրագրով մը՝ Ժողովուրդը բողոք բարձաւ ընդհանուր Ժողովոյ, նոյնիմաստ բողոք մ'ալ 40ի մօտ ծնողներ տուին Ժողովին, յետոյ Ուս. խորհուրդն ալ սասախի բողոք մի մատուց նոյն Ընդհանուրին. Նաւասարդեան ալ նոյն ատեն իւր անհատական և պաշտօնական արժանապատուութեան դէմ գործաւորէն արարքին դէմ բողոքեց և հասուցում պահանջեց ընդհանուր Ժողովէն:

Ընդ. Ժողովոյ ատենապետ Մեծ. Մկրտիչ Մարկոսովի ջանիւք և հակառակ առաջնորդի դժկամակութեան, Ընդ. Ժողովը կը գումարուի, յորում ամբաստա-

նեալ առաջնորդը բաւական դժուար կը գտնէ ինքզինք արդարացունել, մանաւանդ որ օրինական լեզուէ հասկացող և հայերենագէտ Մեծ. Շէրիտճեան թեր կ'ենէ ընկճելոյն և հարստահարեալին :

Յաջորդ նստին մէջ առաջնորդը թոյլ չտար որ խնդրոց կարգին քննուի դպրոցի խնդիրը :

Հրապարակի վերայ առաջնորդ և Բաղաքական Ժողով իբար կը հակասեն և ապօրէն արարից պատասխանատուութիւն իրարու վրայ կը ձգեն . իսկ փաշաներն կը յորդորեն որ խնդիրը «անոյշ տեղը կապեն» :

Այս անցած դարձուածին վրայ այլ և այլ ազգ . Լրագրաց յօդուածներ յղուեցան, բայց չկրցան լոյս տեսնել . գրաքննութիւնն արգելած է ամենէն համառօտին ու կրճատեալներուն ալ լոյս տեսնելը : Զայս իմանալով առաջնորդը աւելի սիրտ առաւ : Ոչ-պաշտօնական նամակներ ալ առաջնորդին եկած են բարձրագիր եկեղեցականաց և ոչ-եկեղեցական անձնաւորութեանց կողմանէ, բայց դեռ յայտնի չէ թէ ազդեցութիւնն ինչ եղած է իւր վրայ :

Առաջնորդին խորհուրդ տուողներ եղան որ դպրոցական խնդիրներ հասկացող երեք անդամներ աւելցունէ թաղ . Պարհրէին վրայ, և զՄեծ. Մարկոսոֆ և զՄեծ. Լեւոն Բէրէստէճեան թաղական ընտրեցին, որոց առաջինն ատենապետ և երկրորդն ատենադպիր անուանուեցան : Անցեալ Ուրբաթ օր ամբողջ թաղ . Պարհուր դը դպրոց գնաց ձեռկան քննութիւն մը կատարելու համար, և կիրակի օրն ալ նիստ մը ընելով՝ դարձեալ ի պաշտօն պիտի կոչէին զՄեծ. Նաւասարդեան, որով խնդիրը պիտի փակուէր, բայց շնորհիւ առաջնորդին ջանից՝ այդ ալ չկրցաւ լինիլ :

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Վերի նամակն Եգիպտահայոց մասին կուտայ մեզ չափով իւր ան լոյսը որ շատոնց կը խնդրէինք :

Մեք այդ դէպքերն յոյժ հետաքրք-

րական և յոյժ կարեւոր կը նկատենք, ոչ լոկ իբրեւ դէպքեր այլ իբրեւ ցուցիչ մեր Եգիպտահայ համազգեաց վիճակին, յառաջդիմութեան աստիճանին և զանազան տարերաց :

Եգիպտոսի մէջ տեղի ունեցած այդ դէպքեր իրենց վերաբանական, դրեթէ զուգահեռականներն ունին ուրիշ գաւառներու ու գաղթականութեանց մէջ ալ :

Ազգային երկու տարրեր ամեն ուրեք դժուարութիւն կը կրեն իրարու հետ ներգաղնակուելու — նոր սերունդը կազմող տարրը հին սերունդեան հետ :

Նորերն հնորուն չեն հաւնիր, և հնորն ալ նորերուն չեն հաւնիր — ահա ինչու չեն կրնար գործել համերաշխ :

Նորերն իրենք զիրենք շատ աւելի հասկացող կը համարին և կ'ուզեն որ իրենց ասպարէզ արուի գործելու . իսկ հիներն նորերուն կարգ մի գաղափարաց չեն հաւնիր, անփորձ և ծայրայեղ կը համարին զայն, և կ'ուզեն նոցա վերայ գործադրել հեղինակութիւն :

Նորերն հեղինակութեան տեղ փոստ կը խնդրեն, հրամանի տեղ պատճառաւորեալ հրահանգ, արհամարհանքի տեղ — համակրանք — և հիները չեն կարող նորոց այդ պահանջը կատարել :

Պէտք է չմոռնալ թէ մեր ազգի մէջ կրթական գործն վերջին 30—40 տարուան մէջ այնպիսի նոր թափով յառաջ տարուած է, որ թէ և դեռ շատ պանծալի չէ արդիւնքն, բաւական եղած է սակայն հրնոյն և նորայն մէջ գգալի անջրպետ մի բանալու :

Երկուստեք պէտք է ճանաչել զայս և ըստ այնմ շարժիլ :

Պիտի ըսեն հնրն թէ նորերուն յառաջդիմութիւնն միակողմանի է կամ թէ լաւ զուգակշռեալ չէ — թող յիշեն թէ իրենք եղած են ստեղծողներն այն վարժարանաց ուստի ելած են այդ նորեր : Իրենք են սերմանած և այժմ պարտին հնձել առանց չափազանց մրմռալու :

Եւ նորերն կ'ուզեն որ ասպարէզն բոլորովին իրենց թողուի, և որ իրենք իմացականօրէն երիցագոյն համարուին քան իրենց հայրերն — շատ անիրաւ պահանջ :

Պէտք է նորերն համոզուին թէ հնրուն փորձառու հակադրողութեան կարօտ են՝ ուղիղ ընթանալու համար — և թէ հնրուն մէջ կան ոչ սակաւ զգօն և

ուշկիմ մարդիկ որք աւելի երիտասարդ են քան շատ մի երիտասարդներ :

Ընդհակառակն կան նորերուն մէջ այնպիսի թերութեւս և յաւակնոտ երիտասարդներ որք բացարձակապէս անտանելի են մեծերուն , և սոցա արդար արհամարհանքն կը գրգռեն իրենց յախուռն ընթացիւք :

Այս ընդհանուր տեսութենէն անցնելով Եգիպտոսայոց արդի գործունէութեան , մեզ անկարելի կը թուի պատասխանատուութեան ճիշդ չափերն գտնել և բառնալ երկու կողմանց վերայ :

Շատ յստակ կը կարծենք տեսնել սակայն թէ երկու կողմն ալ թերութիւն գործած է , և թէ Սրբ. առաջնորդն պատասխանատուութեան խոշոր բաժին մ'ունի :

Գեր. Իւթիւճեան եթէ անիրաւ իսկ չէր , յոյժ անխոհեմ գանուած է վարժարանի մէջ իրեն բաղձալի երեցած յեղափոխութիւնն գործելու եղանակին մէջ : Եթէ Նաւասարդեան ահեղ ոճիր մի գործած լինէր , կրնար զայն իսկոյն , 24 ժամու մէջ պաշտօնանկ ընել . բայց քանի որ եղեռնադործ չէ ճանչուած , հրամայել որ յաջորդ օրն իսկ հրաժարի իւր պաշտօնէ , և առանց Ուս . Խորհրդոյ միջամտութեան — այդ պարզ բռնութիւն , պարզ անիրաւութիւն է — այդ նախատինք մ'է ուսուցչութեան բարձր պաշտօնին , պարզապէս խաղալիկ մ'ընել է տնօրէն-դասատուի դիրքը , այդ՝ կարող երիտասարդներն ուսուցական պաշտօնէն խրտեցունել է :

Մենչեւ երբ ուսուցիչն այնպէս արհամարելի պիտի նկատուի մեր մէջ :

Առաջնորդին պարզապէս ապօրէն ընթացքն գրգռած է իրաւասէրներն և զայնս ալ մղած է փոքր ի շատէ բռնն լինելու իրենց դիմադրութեան մէջ — ինչպէս զՄեծ . Շէրիտճեան — այդ ալ բնական է :

Մեր Սրբ. Առաջնորդներն պարտին մասնաւոր սիրով գուրգուրալ արժանաւոր ուսուցիչներու վերայ , ոչ թէ այնպէս ոտնսկոխ ընել զայնս յախուռն բարկութեամբ :

Արժանաւոր ուսուցիչ մ'ալ արժանաւոր առաջնորդ մի կ'արժէ :

Գարեգին եպ . Սրուանցատեանց ունէր այդ յատկութիւն , նա գրեթէ եղբայրական համակրանօք կը վարուէր արժանակոչ դասադուաց հետ :

Բայց վերջին դիտողութեամբ մ'ալ պէտք է յաւելունք թէ Սրբ. Իւթիւճեան աւելի լաւ առաջնորդ մի կրնայ լինիլ քան այժմ է — եթէ ունենանք աւելի արժանաւոր Պատրիարք մի :

Սրբ. Աշքեան Պատրիարքի դէպ ի Դուռն յանչափս թոյլ և դէպ հայ արժանաւոր եկեղեցականներն յանչափս բռնաւոր վարմունքն է որ մեր առաջնորդներն կը փորձէ իրենց յոռի կողմերն մանաւանդ ցուցնելու :

«Պալլոգ պաշտան գողար» :

ՄԵԼՄԵՏԵԿԵՆ ԿՐՕՆՆ

ԱՄԵՐԻԿԱՑԻՈՑ ԸՆԾԱՅՈՂ ԱՄԵՐԻԿԱՑԻՆ

ՄՈՒՀԱՄՄԷՏ ԱՂԵՔՍԱՆՏՐ ԲԸՍԷԼ ՈՒԷՊ

Նիւ Եորքի բոլոր թերթերն նորոգեալ հետաքրքրութեամբ կը խօսին Մուհէմմէտ Ուէպի մասին , որ միակ Ամերիկացին է մահմետական դարձած ի Փիլիպեան կըղզիս , և Հնդկաստանն պատելէ յետոյ դարձած է անցեալ օր ի Միացեալ Նահանգս՝ այն նպատակաւ որ Մարգարէին կրօնն քարոզէ իւր հայրենակից քրիստոնէից :

Փետր. 28ին անդական թերթերն տեղեկագրեցին այն մասնակի ժողովոյ մասին ուր Մ . Ուէպ սկսաւ իւր գործունէութիւն

Ահաւասիկ թէ ինչ կ'ըսէ «Փրէս» օրաթերթն . —

«Երէկ երեկոյ իբր 20 հոգիք ժողովեցան Գոլոնէլ Սիքլի տունն (նախկին հիւպատոս ի Սիւմ) որպէս զի լսեն ինչ որ Մ . Ուէպ պիտի ըսէր իսլամութիւնն այս երկրի մէջ մուծանելու իւր ծրագրի մասին :

Ներկայից մէջ կային Պատ . Մ . Հ . Ս . Բայթ՝ Լընոքս Էվլինիուի միադաւանեկեղեցւոյ հովիւ , Ս . Վան Ռէնսիլըր , Ճիւլիըս Չէմպլըս , Փօլ Տէյնա , Բրիսչըն Պրոսթէլ՝ Միացեալ Նահանգաց նախկին հիւպատոս Փէրնամպիւքոյի , Տր . Մ . Ս . Գարրիէլեան հրատարակիչ «Հայք»ի , Պոյաճեան Պէյ և Վահան Պոյաճեան :

Մ . Ուէպ խօսեցաւ երկու ժամ : Երկու ամսոյ մէջ պիտի հաստատէ նա ի նիւ

Եւրոպ չաբաթաթերթ մի՝ Մահմէտականութեան չահերուն նուիրեալ : Ընկերութիւն մի պիտի կազմուի երկրին տմեն քաղաքաց մէջ :

Ղուրանի ուսուցմունքն պիտի եղանակաւորին յարմարցուցելու համար ժժ դարու ամերիկեան գաղափարաց : Մր. Ուէպ կ'ըսէ թէ Ղուրանի լեզուն քան զՍ. Գրոցն մաքուր է, և թէ այլապէս նոյն ազգութիւնն ունի մարդիկ դէպ ի լուսագոյն կեանք տանելու : Ղուրանը կը վրիպի ուէ մարդու յարութիւնն, մարմնացումն կամ առատուածութիւնն ուսուցանելու : Կը սովորեցունէ ժուժկալութիւն, յաճախ աղօթել և բազմակնութիւն : Ջատագովեց զբազմակնութիւն իբրև լաւ բան՝ որպէս կը գործադրուէր այն ի մահմետականաց :

Բաւական սրբացման պէտք ունէր մարդ յարելու համար իւր գլխաւոր կնօջ և միւսներուն հետ իբրև քոյրերու հետ վարուելու համար :

Մր. Ուէպ գիտէր թէ այս նորութիւն յամրաքայլ պիտի յառաջանայր աստ ի սկզբուն, սակայն կը կարծէր թէ շատ աղքիկներ տուններ պիտի գտնէին որք այժմ անգործ են, և ընկերային չարիքը պիտի նուազէր :

Մր. Ուէպ խնդրեց որ հարցումներ ուղղուին իրեն. Պատ. Էլիբը, Տր. Գաբրիէլեան, Պոյաճեան Պէյ և այլք մի քանի գիտողութիւններ ըրին ի նպատակ քրիստոնէութեան :

Տր. Գաբրիէլեան ըսաւ թէ Մահմետականութիւնն միապետական է : Մր. Ուէպ պատասխանեց թէ այն է քան զամենան հասարակատական բոլոր կրօնից :

Բաւական երկար տեւեցին երկուստեք գիտողութիւնք :

«Փրէս»ի վերի տեղեկագիրն շատ համառօտ է : «Հէրըլտ», «Սըն» և այլ թերթեր աւելի լեցուն տեղեկութիւն տուած են, թէ և ամենն ալ անկատար են և կը պարունակեն ինչ ինչ անճշգրտութիւններ :

«Հայք»ի խմբագիրն բաւական երկար խօսեցաւ և իւր գլխաւոր փաստերն ցըրուած կը գտնուին այլ և այլ թերթերու տեղեկագրութեանց մէջ, թէ և յոյժ համառօտ :

Ն. Եորք ՍԸՆ իւր տեղեկագրի մէջ ունի հետեւեալ տողերն. —

«Տր. Մ. Ս. Գաբրիէլեան... Մուհամէտ Ուէպի ու շաղրութիւնն հրաւիրեց

այն կէտին թէ իսլամ կրօնն կը պարունակէ մէկ ճշմարտութիւն, այսինքն թէ մէկ Աստուած կայ, մինչդեռ Յիսուս ուսոյց բազում ճշմարտութիւններ : Իսլամ կրօնն, ըսաւ, կէս-բարբարոս Արաբաց համար գէշ կրօն չէ, բայց խեղճ բան մ'է քրիստոնէութեան տեղն դրուելու համար :»

Ն. Եորք ՀԷՐԸԼՏ կուտայ հետեւեալ կտորն իւր տեղեկագրն մէջ —

«Տր. Գաբրիէլեան, բնիկ Թուրքիացի, ուժգին փաստաբանութիւն մ'ըրաւ ընդգէմ իսլամութեան, որ, փաստաբանեց, ամեն նկատմամբ ստորին է քան զքրիստոնէութիւն, և հաւատացեալներն կը վարէ երկիւղի ու խոստումներու միջոցաւ և չդրդեր զոյնս բարին ընել բարւոյն սիրով : Ըսաւ թէ կանայք քոջ կը կրեն և ամեն հարգ ու կանոն այն գաղափարի վերայ հաստատուած է որ փորձութեան առջեւ չգտնուին հաւատացեալք : Միւս կողմանէ՝ քրիստոնէական հաւատքը կուսուցանէ իւր ժողովրդաց դիմանալ փորձութեան և չվարուիլ նոցա հետ իբր տղայց հետ :»

Ս.յս մասին շատ ըսելիք ունի «Հայքի խմբագիրն, բայց ոչ «Հայք»ի մէջ : Մեր ընթերցողաց սաչափ ըսենք թէ Մ. Ուէպ ոչ զՂուրան, ոչ իսլամական օրէնքն, ոչ իսլամ ազգերն, ոչ քրիստոնէական կրօնն, ոչ այդ երկու կրօնից ոգին հասկցած է : Նա շատ խեղճ, ծանծաղ ուսանող մ'է մահմետականութեան, և հազիւ կարժէ վինքը ուսանող կոչել : Համոզուած մարդու մի երեւոյթն չունի, և ոչ չեղտերն :

ԼԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԵՅՆԸՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՑՍՄԱՔՆ ԵԼՆԵԼԷ ԱՌԱՋ

ԻՆՉ ՔՆՆՈՒԹԵՆԷ Կ'ԱՆՑՆԻՆ

Ճիշդ վերջին շաբաթներս աւելի դժուարացած են Ամերիկայի ցամաքն ելնելու պայմանքն որք կը պահանջուին գաղթականներէ :

Ի բացատրութիւն և ի զգուշութիւն արդէն հոս գտնուողաց և այսուհետեւ

գալու փափաքողաց, յիշենք թէ անցեալ օր, Փետր 15ին Հասնող մեր Հինգ Հայրենակիցներ ինչպիսի խիստ քննութեան բովէ անցան:

Երբ Էլիս Այլէնտ Հասան Հայերն, իրենց իւրաքանչիւրին ուղղուած տուածին Հարցումն էր:— «Այս երկրին մէջ ազգական ունի՞ս»:

— Այո՛, ունիմ:

— Ինչ է աճունն, ինչ գործով կը գրադի, ո՞ր կ'աշխատի: Եւ քո ինչն է նա:

Այս Հարցմանց պատասխաններն կ'արձանագրուին:

— Դու քո՞ւ ծախքովդ եկար թէ ուրիշին: Ինչ արհեստ գիտես: Ազգականդ արդէն գործ գտե՞ր է քեզի Համար որպէս զի խեղճ չմնաս:

Ասոնց ալ պատասխաններն կ'արձանագրեն:

— Կարդալ գրել գիտե՞ս:

— Այո՛, Տէ՛ր:

— Նստէ դրէ սա թղթին վերայ:

Ապա բերել կողտան արդէն Ամերիկա գտնուող իւր աղքականն, և սմա ալ կ'ուղղեն կարգ մի Հարցումներ, և պատասխաններն կը բաղդատեն նոր եկողինին հետ:

Եւ շարունակելով քննութիւնն, Հնուց եկած Հայուն կը Հարցնեն—

Շարաթական ո՞րքան վարձք կ'ընդունիս: Նոր եկող ազգականիդ Համար գործ գտե՞ր ես:

Կը պատասխանէ թէ ինքը շաբաթը այսքան վճարում կ'ընդունի, ուստի և կարող է իւր նորեկ ազգականի ապրուստն ալ հոգալ ի Հարկին, բայց նորա Համար դեռ գործ չէ գտած, և չէր ալ կրնար գտնել անոր գալէն առաջ, սակայն պիտի աշխատի անոր գործ գտնել:

Այս բոլոր պատասխաններն դրի կ'առնուն քննիչք և թուղթն ստորագրել կուտան պաշտպանող Հայուն, և վերջապէս երգում ալ առնլով՝ թող կուտան որ իւր պաշտպանեալն եղող ազգականն առնուտանի ցամաք:

«Հայքի» մուտքն ի Ռուսիա ազատ է:

«ՊՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեղութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, Հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ:

«ՄԱՐԶԱՐԱՆ», գառազիրք զինուորական կրթութեան: բազում ձեւերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գառապարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՍՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելումով ազգային ու օտար Հատընտիր ընթերցումաց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէռ կամ 5 ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՈՒԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արեւելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան: Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

«ՀԱՅՔ»

Թղթական

Ա. տարի 1 տոլար 50 սէնթ կամ 7 ֆր. 50ս.
Բ. տարի 2 տոլար կամ 10 ֆրանք

Մեծայարգ Տի. Մ. Չերազ իւր թերթի անգլիերէն հրատարակութիւնն գաղթեցուցած է չորրորդ տարւոյնսկիզբէն, և միայն Փրանսերէն պիտի հրատարակէ «ԼԱՌԱՄԵՆԻՆ», ամիսն մէկ անգամ: Թերթին տարեկան բաժնեգինն է 3 տոլար 75 սէնթ կամ 18 ֆր. 75 սանթիմ: Հասցէն է.

33 DE VERE GARDENS, LONDON, W.
ENGLAND

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 77. Էվինիու

Նիւ Եորք

267 և 277. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

KRONOFF & OLDSSEN

FINE CUSTOM TAILORS
And Dealers in

GENT'S FURNISHINGS

ԴԵՐՁԱԿ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԱՎԱՃԱՌ

214 Main St.

WORCESTER

MASS.

Յակոբ Էֆրեմյան Կարապետ Էֆրեմյան
348 Fountain Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston, Mass

ՆԱԽԱՐԱՐ ԵՒ ԷՔՍԻԶԵՆ

Յովհաննէս Էֆրեմյան Գէորգ Էֆրեմյան

HOPKINS & ATKINS
PATENTS Washington, D. C. 20
years' experience
write for information



REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Bilioussness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.
Ripans Tablets contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.

Ripans Tabules cure headache.

Ripans Tabules cure constipation.

Ripans Tabules : for sour stomach.

Ripans Tabules : for liver troubles.

Ripans Tabules : a family remedy.

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ . Մ . Դ Ա Ք Ր Ի Է Լ Ե Ա Ն

NORBERT FRANCK

ԴԵՂԱԳՐՈՐ

311 77 Էֆրեմյան Նիւ Եորք
277 և 287 Փողոցներու միջև
Դեղագիրք կը պատրաստուին խնամով

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳՆԵ ՉԱՍԵՆՈՐ

(Հաստատուել է 1849)

56 Front St.

Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և
չափաւոր գնով

THE WORCESTER MECHANICS

SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷԻԷՆԻԲՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԵՆԻ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յուշմար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով :

A. A. McLAUGHLIN

137 MAIN ST.

WORCESTER,

MASS.

Ես բազում Հայ յաճախորդներ ունիմ և ամեն շաբաթ երեկոյ Հայազգի վաճառող մ'ալ կը պահեմ վաճառատանս մէջ որ անգղիերէն խօսելու անվարժ Հայերու կը ցուցնէ մեր ապրանքներն, որք են գըլխարկ, վերարկու, սոնազգեոտ (փանթոլոն), գուլպա, շապիկ ևն. ևն. Մեր գին ամենուն համար մէկ է եւ չափաւոր է. եկէք եւ տեսէք :